



Արարատյան բակավարիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան - Ապրիլ 2017
Տևողություն - 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

ՆԱԽ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Նախ կարդալ այս ուղեցույցը՝

Գրե՛ք Ձեր անուն ազգանունը համապատասխան մասում:
Հետևե՛ք ստորև նշված հրահանգներին՝
Գրե՛ք կապույտ կամ սև գրիչով.
Չօգտագործե՛ք սոսիևձ, ուղղող հեղուկ, ամրակներ:

Քննաթերթիկը բաղկացած է երկու մասից՝
հայոց պատմություն և համաշխարհային:
Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է տպագիր **4** էջից:

Հայոց պատմություն

1. Հույն պատմիչ Քսենոփոնը հայերի կենցաղը նկարագրելիս գրում է. «Տներն այստեղ գետնափոր էին. մուտքը՝ ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասը՝ ընդարձակ...»:

Դատելով Քսենոփոնի վկայություններից՝ ի՞նչ եք կարծում, ի՞նչ նպատակներով էին հայերն իրենց տները գետնափոր կառուցում:

5 միավոր

2. Հռոմի հռչակավոր կայսր Մարկոս Ավրելիոսին որպես գահակից կայսր նշանակվել էր Լուցիոս Վերոսը, որի անունով հետագայում Հռոմում թողարկվեց ոսկե մետաղադրամ: Մետաղադրամի վրա նշված էր լատիներեն հետևյալ արտահայտությունը «Լուցիոս Վերոս Արմենիակոս»:

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր Հայաստանը հիշատակված այդ մետաղադրամի վրա:

5 միավոր



3. Բյուզանդական կայսրության Հայկական (կամ Մակեդոնական) դինաստիայի հիմնադիր հայազգի Բարսեղ I-ը (Վասիլ I) կայսր դառնալուց հետո խնդրում է Հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն իրեն թագ ուղարկել:

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ պետք է աշխարհի հզորագույն գերտերության կայսր Բարսեղը թագ խնդրեր Աշոտ Բագրատունուց:

5 միավոր

- 18-րդ դարում Հնդկաստանում գրվեց «Որոգայթ փառաց» աշխատությունը, որը պետք է լիներ Հայաստանի ապագա անկախ պետության սահմանադրությունը:

Դատելով դրանում առկա հետևյալ տողերից՝ ի՞նչ եք կարծում, ըստ այդ սահմանադրության Հայաստանը պետք է լիներ միապետություն, թե հանրապետություն:

3.5 միավոր

«Ամենայն մարդ ազատապես կարե խորհիլ, խօսել եւ գործել զամենայն զոր ինչ բարի եւ չար ըստ կամաց եւ հաճոյից իւրոց...»: (Ամեն մարդ ազատապես կարող է մտածել, խոսել և գործել այն ամեն բարին և չարը, որ կամենում է և իրեն հաճո է...)

- Կիլիկիայի հայկական պետության արքա Լևոն Ա Մեծագործը իր թագադրման համար որպես օր ընտրել էր 1198 թ. հունվարի 6-ը: Ինչո՞ւ հենց հունվարի 6-ը և այդ օրը նշվող ո՞ր իրադարձության հետ էր նա կապում իր թագադրման օրը:

3.5 միավոր

Համաշխարհային պատմություն

- 1946 թ. մարտին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլի ունեցած Ֆուլթոնյան ելույթը «Սառը պատերազմի» սկիզբը դրեց:


Ի՞նչ էր իրենից ներկայացնում «Սառը պատերազմը»:

5 միավոր

- 1968 թվականի փետրվարի 26-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունում է ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված ռճրագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետը չկիրառելու մասին կոնվենցիան.

Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նկատի առնվել «վաղեմության ժամկետ» եզրույթը նշելով:

5 միավոր



ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան - Ապրիլ 2017

«Այբ» ավագ դպրոց

Գնահատման սխեմա

Հարցերի միավորների ընդհանուր քանակը 32 է:

1. Դատելով Քսենոփոնի վկայություններից՝ ի՞նչ եք կարծում, ի՞նչ նպատակներով էին հայերն իրենց տները գետնափոր կառուցում:

Այս հարցին կարելի է պատասխանել երկու հիմնական տեսանկյունից: Տները գետնափոր կարող էին կառուցել առաջին հերթին անվտանգության նկատառումներով ինչպես արտաքին թշնամու, այնպես էլ բնական աղետների՝ երկրաշարժ և այլն: Երկրորդ, որ գետնափոր տներն ավելի տաք էին ձմռանը, իսկ ամռանը զով՝ սննդամթերքը լավ պահպանելու համար:

2. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Եր Հայաստանը հիշատակված այդ մետաղադրամի վրա:

Հարկ է հիշել, որ հռոմեական մետաղադրամների վրա Հայաստանը կամ որևէ այլ պետության անվանումը նշվում էր այն դեպքում, երբ հռոմեացիներն այն համարում էին նվաճված: Որպես փաստ կարելի է բերել ուշ Արտաշեսյան ժամանակաշրջանի հռոմեական մետաղադրամները:

3. Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ պետք է աշխարհի հզորագույն գերտերության կայսր Բարսեղը թագ խնդրեր Աշոտ Բագրատունուց:

Նախ պետք է հիշել շատ հանրահայտ փաստ, որ Բագրատունիներն ավանդաբար Արշակունիների ժամանակաշրջանում թագադիր ասպետներն էին: Այսինքն, նրանց էր պատկանում նոր թագավորին թագադրելու իրավունքը: Եվ երկրորդ, որ Բարսեղը ազնվատոհմիկ ծագում չուներ և դրանով արհեստականորեն փորձում էր իրեն ազնվականական ծագում վերագրել:

4. Դատելով դրանում առկա հետևյալ տողերից՝ ի՞նչ էք կարծում, ըստ այդ սահմանադրության Հայաստանը պետք է լիներ միապետություն, թե հանրապետություն:

Տողերում նշվում են մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող կետեր, որոնք 18-րդ դարի աշխարհի համար բացառիկ էին և ավելի հատուկ էին հանրապետական կարգերին: Միաժամանակ աշակերտը պետք է հիշի, որ «Որոգայթ փառացը» ստեղծել էին հնդկահայերը, ովքեր սերտ շփումների մեջ էին եվրոպական, հատկապես անգլիական իրականության հետ: Ուստի, ի տարբերություն Ռուսաստանի հայերի ծրագրի, ըստ որի ապագա Հայաստանը պետք է միապետություն լիներ, հնդկահայերի նպատակը հանրապետական Հայաստանն էր:

5. Ինչո՞ւ հենց հունվարի 6-ը և այդ օրը նշվող ո՞ր իրադարձության հետ էր նա կապում իր թագադրման օրը:

Հռոմի պապը և Արևմուտքը Լևոն Ա Մեծագործին թագադրելու դիմաց պահանջել էին ընդունել կաթոլիկություն և թագադրումն իրականացնել կաթոլիկ ծեսով: Լևոնը գնում է դիվանագիտական հնարքի: Որոշ, զուտ ցուցադրական զիջումների գնալով, նա պնդում է, որ իր թագադրումը լինի Հայոց եկեղեցու ավանդաբար Սուրբ ծննդի նշվող օրը՝ հունվարի 6-ին, այլ ոչ կաթոլիկ ավանդույթին համաձայն:

6. Ի՞նչ էր իրենից ներկայացնում «Սառը պատերազմը»:

Պետությունների երկու խմբավորումների միջև սուր հակամարտություն, որը չվերաճեց բաց պատերազմի: Դրանում հիմնական դերակատարները ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ն էին: Պատասխանում խրախուսելի հիշատակել, թե այդ հակամարտությունը որ ոլորտներում էր արտահայտվում՝ ռազմաքաղաքական, տնտեսական, տիեզերքի նվաճում և այլն:

7. Ի՞նչ էք կարծում, ի՞նչ է նկատի առնվել «վաղեմության ժամկետ» եզրույթը նշելով:

Կարևոր է, որ աշակերտն իմանա, որ 1948 թ. ՄԱԿ-ը ցեղասպանությունների դատապարտման իրավական վճիռ է ընդունել: Իսկ 20 տարի անց այդ որոշմանն ավելացվեց «վաղեմության ժամկետի» հավելումը, ըստ որի՝ անկախ անցած ժամանակից,

երբ էլ որ ցեղասպանության իրողությունն իրավաբանորեն հաստատվի, այն պետք է դատապարտվի:

Աշակերտի պատասխանների գնահատման հիմնական մակարդակներ

Մակարդակները հաշվված են յուրաքանչյուր հարցի համար սահմանված միավորի տոկոսայնությամբ:

Մակարդակ 1. պատասխանները և մոտեցումները հիմնավորում է համակողմանի՝ բերելով հնարավորինս շատ փաստարկներ: Գնահատականներ տալուց առաջ կատարում է փաստերի համադրում, համեմատություն և վերլուծություն: **85-100 %:**

Մակարդակ 2. պատասխանները և մոտեցումները հիմնավորում է, սակայն ոչ համակողմանիորեն՝ նշելով սակավ փաստեր: Համադրում և համեմատում է փաստերը, սակայն տալիս է ոչ հստակ պատասխան: **65-85 %:**

Մակարդակ 3. պատասխանները և մոտեցումները ներկայացնում է առանց համեմատությունների և համադրումների: Հարցի պատասխանը տալիս է առանց փաստերով հիմնավորելու և վերլուծելու: **45-65 %:**

Մակարդակ 4. դժվարանում է տալ որևէ պատասխան և մոտեցում կամ ընդհանրապես չի տալիս: Պատասխանում բացակայում են փաստեր, վերլուծություն կամ բերված փաստերը տրամաբանական կապ չունեն նշած պատասխանի հետ: **0-45 %:**



Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ ԵՎ ԼԵՂՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան - Ապրիլ 2017
Տևողություն - 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

ՆԱԽ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Նախ կարդալ այս ուղեցույցը՝

Գրե՛ք Ձեր անուն ազգանունը համապատասխան մասում:
Հետևե՛ք ստորև նշված հրահանգներին՝
Գրե՛ք կապույտ կամ սև գրիչով.
Զօգտագործե՛ք սոսիևձ, ուղղող հեղուկ, ամրակներ:

Աշխատանքը նախատեսվում է տեքստի շուրջ: Ստուգվում են դիմորդի գիտելիքները հայոց լեզվի բոլոր բաժիններից: Առաջադրանքները ներկայացվելու են բաց հարցերի ձևով: Որոշ հարցեր ենթադրում են կարճ պատասխաններ, այսինքն՝ մեկ կամ երկու բառով: Լեզվամտածողության բաժնում ներկայացված առաջադրանքները վերաբերում են տեքստի բովանդակության ընկալմանը, մեկնաբանելու և ինքնուրույն ստեղծագործելու ունակությունների բացահայտմանը:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է տպագիր 5 էջից:

Հայոց լեզու

1. Լրացնել բաց թողած տառերը:

Ահա մեր գետը, մեր գուլալ գետը: Կարող ես ջրի տակ խիճերը մեկ-մեկ համրել: Հորօքերը վառվիսելով, պոչները վեր պահած, մտնում են ծանծաղուտը, ջուր խմում, սաօսօալով ետ գալիս: Սառն է ջուրը. բարօր սարից է գալիս, ուր միշտ մռայլ ամպ է նստում, ամպի տակ՝ սառույցի հաստ շերտեր:

Իսկ երբ վարարում է... Կոճղեր է բերանն առնում, գազազած բաշը մեկ այս ափին տալիս, մեկ այն, նոր հուն ճեօքում ավերելով բոստան և մարգագետին: Հին կամուրջի գերաօքերը դողում են շյուղի նման: Գետը ծանր քարեր է շպօտում կամարի հիմքերին, ասես զայրանում է, որ կամուրջն իր հոսանքը բաժանում է ճյուղերի:

Գարնան մթօկա գիշերներին ջրի վօոցը ահարկու սաօսափ է տարածում գետափի տներում, Դրնգանի ձորերում: Ջրադացները լռում են, ջրադացպանը, վառ լապտերը ձեռքին, գիշերը մոտենում է գետին՝ տեսնի՝ չի՞ բարակել արդյոք:

5 միավոր

2. ա. Տեքստից դ՛րս գրիր միակազմ նախադասության 1 օրինակ:

բ. Այդ նախադասությունը փոփոխելով՝ վերածի՛ր երկկազմ նախադասության:

2 միավոր

3. ա. Տեքստից դ՛րս գրիր 1 բարդ համադասական նախադասություն:

բ. Բարդ համադասական նախադասությունը վերածի՛ր բարդ ստորադասական նախադասության:

2 միավոր

4. Կազմիր ճարտասանական հարցում արտահայտող 1 նախադասություն տեքստի վերաբերյալ:

1 միավոր

5. Տեքստից դ՛րս գրիր 1 ածանցավոր գոյական և այդ գոյականի արմատից կազմի՛ր մեկական

ածական

բայ

մակբայ

2 միավոր

6. Տեքստից դ՛րս գրիր 1 սուկածանցավոր բայ և կազմի՛ր այդ բայի պատճառական և կրավորական ձևերը:

Սուկածանցավոր

Պատճառական

Կրավորական

1,5 միավոր

7. Նախադասությունների կողքին նշի՛ր, թե ինչ խոսքի մաս է «առաջ» բառը:

ա. Առաջ նա այդպես չէր ընկալում իմ խոսքերը:

բ. Դռան առաջ նստած շունը ուշադիր նայում էր ինձ:

գ. Նա կպատասխանի քեզնից առաջ:

1,5 միավոր

8. Հետևյալ նախադասություններում թույլ են տրված տարաբնույթ սխալներ (բառագործածության, իսկոգրառության, համաձայնության), գտի՛ր և ուղղի՛ր սխալները:

1. Ինձ դուր է գալիս հայ ժողովրդի աշխատասիրությունը, լավատեսությունը և անկոտրում կամքը:
2. Այդ հարցը ինձ չի վերաբերվում, և ես չեմ ուզում մասնակցել դրա քննարկմանը:
3. Ես երբեք չեմ դավաճանում իմ սկզբունքները:
4. Բժշկության մեջ հազվագյուտ հանդիպող հիվանդություններ կան:

2 միավոր

9. Կետադրի՛ր տեքստը:

Բոլորը գիտեն որ խլացած Բեթովները երաժշտություն էր գրում իսկ ռուս դերասան Օստոլժը լսողությունը կորցնելուց հետո էլ մնաց բեմի վրա ապշեցնելով իր երկրպագուներին: Սակայն քչերն էն ճանաչում 1948 թվականին մահացած Լինա Պոյին որը ամբողջովին կորցնելով տեսողությունը շարունակում էր հիանալի քանդակել և ավելի քան հարյուր քանդակ էր ստեղծել այդ վիճակում: Նրան հաջողվում էր միանգամայն անխաթար առանց որևէ մանրամասն բաց թողնելու մարմնավորել իր մտահաղացումները նյութականորեն:

3 միավոր

Լեզվամտածողություն

10. Ի՞նչ ոճով է շարադրված վերևում բերված 1-ին առաջադրանքի տեքստը: Պատասխանդ հիմնավորի՛ր՝ ներկայացնելով այդ ոճի երկու բնութագրական հատկանիշ, որոնք առկա են տեքստում:

3 միավոր

11. 2-3 նախադասությամբ բնութագրի՛ր գետը գիտական ոճով:

2 միավոր

12. Տեքստի հիմնական միտքն արտահայտի՛ր 1 բարդ ստորադասական նախադասությամբ:

1 միավոր

13. Տեքստից դո՛ւրս գրի՛ր սրդողել բայի հոմանիշը. գրի՛ր ևս երկու հոմանիշ:

Սրդողել _____

1,5 միավոր

14. Սրդողել բայի իմաստն արտահայտի՛ր դարձվածքով և նրանով կազմի՛ր 1 նախադասություն:

1,5 միավոր

15. Գրի՛ր փոքրիկ երկխոսություն գետի և կամուրջի միջև՝ գործածելով 8-ից 10 նախադասություն:

3 միավոր

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Հայոց լեզվի և լեզվամտածողության տիպային քննաթերթի գնահատման չափանիշները հասանելի կլինեն մեր կայքում մինչև մարտ ամիսը:



ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ ԵՎ ԼԵՂՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան - Ապրիլ 2017

«Այբ» ավագ դպրոց

Քննական առաջադրանքների գնահատման չափանիշներ

Քննաթերթիկը բաղկացած է 2 բաժիններից՝ հայոց լեզու և լեզվամտածողություն: Առավելագույն միավորը 32-ն է, որից 20 միավորը տրվում է լեզվական գիտելիքների ստուգմանը:

Յուրաքանչյուր առաջադրանքի ընդհանուր միավորը համապատասխանաբար բաշխվում է հնարավոր ճիշտ պատասխանների միջև:

Օրինակ՝ եթե առաջադրանքի ընդհանուր միավորը 2 է, իսկ ճիշտ պատասխանները 4-ն են, այդ դեպքում յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 0,5 միավոր:

Դիմորդը գրկվում է համապատասխան միավորից, եթե սխալ պատասխան է ներկայացրել կամ անհրաժեշտ 4-ի փոխարեն գրել է 5 տարբերակ: Լուծման յուրաքանչյուր սխալ քայլի համար առավելագույն միավորից հանվում է 0,5 միավոր:

Լեզվամտածողություն բաժնի առավելագույն միավորը 12-ն է: Այս բաժնում դիմորդը հնարավորություն ունի ներկայացնելու իր վերլուծական, ստեղծագործական կարողությունները գրավոր շարադրանքի միջոցով:

Նմանատիպ առաջադրանքների առավելագույն միավորը բաշխվում է հետևյալ սկզբունքով՝
ա. 1 միավոր տրվում է, եթե դիմորդը ներկայացրել է անսխալ շարադրանք՝ զերծ ուղղագրական, կետադրական, քերականական և ոճական սխալներից:

բ. Մնացած միավորը տրվում է բովանդակությանը: Եթե դիմորդը հարցին տվել է լիարժեք պատասխան, ապա վաստակում է բովանդակության համար տրվող ամբողջական միավոր:



Արարատյան բակալավրիատի քննական կենտրոն
ԱԲ ավագ դպրոցի ընդունելության քննություններ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան - Ապրիլ 2017
Տևողություն - 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

ՆԱԽ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Նախ կարդալ այս ուղեցույցը՝

Գրե՛ք Ձեր անուն ազգանունը համապատասխան մասում:
Հետևե՛ք ստորև նշված հրահանգներին՝
Գրե՛ք կապույտ կամ սև գրիչով.
Չօգտագործե՛ք սոսինձ, ուղղող հեղուկ, ամրակներ:

Գրականության քննաթերթն ընդգրկելու է կա՛մ արձակ, կա՛մ չափածո գործի վերլուծություն:

Չափածո կամ արձակ գործերից դիմորդին տրվելու է հատված, որի շուրջ էլ կազմված են լինելու հարցերը: Հարցերը վերաբերելու են տրված հատվածի բովանդակությանը և կառուցվածքին, կերպարների վերլուծությանը, ինչպես է հեղինակը զարգացնում կերպարը, լեզվաոճական առանձնահատկություններին, պատկերավորման միջոցներին: Բոլոր հարցերը բաց են և պահանջում են ազատ շարադրանք: Որոշ հարցեր ենթադրում են կարճ պատասխաններ, այսինքն՝ մեկ կամ երկու բառով պատասխան:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է տպագիր 5 էջից:

Ներկայացվող հատվածը Հովհ. Թումանյանի «Փարվանա» բալլադից Է: Կարդա՛ տրված հատվածը և պատասխանի՛ր հետևյալ հարցերին:

Հագած, կապած զենք ու զըրահ,
Ձիանք հեծած ամեհի,
Ահա եկել հավաքվել են
Կըտրիճները Կովկասի,
Ծեր Փարվանա թագավորի
Ապարանքի հանդիման
Կազմ ու պատրաստ սպասում են
Մոտիկ ժամին մըրցության:
Ըսպասում է ողջ աշխարհքը՝
Եկած, կիտված Փարվանա,
Թե ո՞ր կըտրիճն արդյոք պիտի
Էն սիրունին տիրանա:

Հընչեց փողը: Ահա փունջ-փունջ
Դըրանիկներ, նաժիշտներ,
Ահա աղջիկն իր նագելի
Ու թագավորն ալեհեր:
Հայրը ինչպես մըռայլ մի ամպ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փարված՝
Դուրս են գալի միասին:
Հառաչում է ողջ աշխարհքը.
Կըտրիճները, քարացած,
Երազների մեջ են ընկնում
Էս աշխարհքից վերացած:
ա. — Նայի՛ր, դստրի՛կ, իշխանագուն
Էս քաջերին լայնալանջ,
Այժմ պիտի հանդես դուրս գան,
Պայքար մըտնեն քո առաջ.
Մեկը իրեն ուժը ցույց տա,
Մյուսը՝ շընորհքն իր բազկի,

Ո՛րը՝ ճարպիկ ձիարշավը,
Ո՛րն էլ՝ թափը իր վազքի:
Իսկ երբ կըռփվն առնի դադար,
Հայտնի լինին քաջն ու վատ,
Ու երբ անցնեն մեր առջևից
Կըտրիճները պայազատ,
Ընտրի՛ր, զարկի՛ր ձեռքիդ խնձորն
Անհաղթներից անհաղթին,
Որ ողջ աշխարհի մայիլ մընա
Անզուգական քո բախտին:

բ. Ասավ արքան, ձեռքը ձըգեց,
Նըշան տըվավ պայքարին,
Այնինչ՝ աղջիկն առաջ եկավ՝
Կարմիր խնձորն իր ձեռին:
— Գուցե, հայրի՛կ, տըկար լավին
Հաղթի մի վես տըմարդի,
Բայց չի կարող լինել երբեք
Նա սիրելին իմ սըրտի...
— Է՛յ, Փարվանա չըքնաղ փերի,
Ի՞նչն է հավան քո սըրտին,—
Խըռնըվում են կըտրիճները,
Խընդրում կըրկին ու կըրկին:

— Գա՞նձ ես ուզում, ոսկի՞, արծա՞թ,
Անգին քարեր ու գոհա՞ր,
Ա՛ստղ ես ուզում, մենք երկընքից
Վար կըբերենք քեզ համար:

գ. — Ինչի՞ս են պետք ոսկին, արծաթ
Եվ կամ աստղը երկընքի,
Ոչ էլ գոհար եմ պահանջում
Սեր-ընկերից իմ կյանքի:
Ես նըրանից հուր եմ ուզում,
Անշեջ հուրը սըրբազան,
Ով կըբերի անշեջ հուրը,

Նա է ընտրած իմ փեսան...

Ասավ աղջիկն, իրար անցան

Կըտրիճները քաջարի,

Ձիանք հեծած թըռան հապճեպ

Դեպի չորս կողմն աշխարհի:

Թըռա՛ն, շուտով գըտնեն, բերեն

Անշեջ հուրը աղջըկան.

Բայց... տարիք են գալի՛ս, գընո՛ւմ,

Նըրանք չըկան ու չըկան...

1. «Փարվանա» ստեղծագործությունը կոչվում է բալլադ: Բացատրի՛ր, թե ինչ է նշանակում բալլադ:

2 միավոր

2. Բացատրի՛ր տեքստում գործածված բառերի իմաստը:

Դրանիկ

Իշխանագուն

Պայազատ

Անշեջ

2 միավոր

3. Բալլադում առանձնացված ա (16 տող) և բ (8 տող) հատվածների համար գրի՛ր ամփոփում. քո բառերով շարադրի՛ր, թե ինչ է ասվում այդ հատվածում: Ամփոփման մեջ ներառի՛ր նաև քո մեկնաբանությունը:

ա.

բ.

8 միավոր

4. ա. Գ հատվածում (8 տող) Փարվանա արքայադուստրը պատասխանում է կտրիճներին:
Ինչպե՞ս կմեկնաբանես աղջկա պատասխանը: Պատասխանդ հիմնավորիր:

5 միավոր

բ. Ի՞նչ է նշանակում «անշեջ հուր» արտահայտությունը:

1 միավոր

5. ա. Տեքստից դո՛ւրս գրիր տրված պատկերավորման միջոցներից մեկական օրինակ:
Համեմատություն _____

Մակդիր _____

Շրջադասություն _____

Հանգ _____

4 միավոր

բ. Քո ընտրած պատկերավորման միջոցներից մեկի օրինակով բացատրի՛ր, թե հեղինակը հատկապես ինչն է շեշտադրում տրված հատվածում մի՞տքը, գաղափա՞րը, հատվածի հուզականությունը, թե՞... Պատասխանդ հիմնավորի՛ր:

3 միավոր

6. Լեզվական ի՞նչ միջոցների կիրառումով է հեղինակն այս տողերում ստեղծում ժամանակի հոսք:

*Բայց... տարիք են գալի՛ս, գընո՛ւմ,
Նըրանք չըկան ու չըկան...*

3 միավոր

7. Մեկնաբանի՛ր, թե Փարվանա կտրիճներն ինչո՞ւ այդպես էլ չվերադարձան:

4 միավոր

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Գրականության տիպային քննաթերթի գնահատման չափանիշները հասանելի կլինեն մեր կայքում մինչև մարտ ամիսը:



ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան - Ապրիլ 2017

«Այբ» ավագ դպրոց

Քննական առաջադրանքների գնահատման չափանիշներ

Գրականության քննաթերթիկն իր մեջ ներառում է բաց հարցեր, որոնք պահանջում են ազատ շարադրանք, և փակ հարցեր, որոնք ունեն հստակ պատասխաններ:

Փակ հարցերին տրվող ընդհանուր միավորը համապատասխանաբար բաշխվում է հնարավոր ճիշտ պատասխանների միջև: Դիմորդը գրկվում է համապատասխան միավորից, եթե սխալ պատասխան է ներկայացրել կամ ճիշտ պատասխաններին զուգահեռ տվել է նաև սխալ պատասխան:

Օրինակ՝ եթե առաջադրանքի ընդհանուր միավորը 1,5 է, և դիմորդը պետք է տա 2 ճիշտ պատասխան, ապա յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 0,75 միավոր: Ամեն սխալ պատասխանի դեպքում հանվում է 0,75 միավոր:

Բաց հարցերի առավելագույն միավորը բաշխվում է հետևյալ սկզբունքով՝

ա. 1 միավոր տրվում է, եթե դիմորդը ներկայացրել է անսխալ շարադրանք՝ զերծ ուղղագրական, կետադրական, քերականական և ոճական սխալներից:

բ. Մնացած միավորը տրվում է բովանդակությանը: Եթե դիմորդը հարցին տվել է լիարժեք և սպառիչ պատասխան, ապա վաստակում է բովանդակության համար տրվող ամբողջական միավոր:

Օրինակ՝ եթե առաջադրանքի առավելագույն միավորը 4 է, ապա 1 միավոր տրվում է ճիշտ գրավոր խոսք կառուցելու սկզբունքները պահպանելուն, իսկ մնացած 3 միավորը տրվում է շարադրանքի բովանդակությանը: Բովանդակային շարադրանքում սխալներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր սխալի համար հանվում է 0,5 միավոր:

